ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№ 3930-Ա « 11 » հոկտեմբերի 2024թ.

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի 07.10.2024 թվականի հ. 01/1782-24 գրությունը.

1. Թույլատրել «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրենին՝ թանգարանին ամրացված գույքի կազմից՝ թանգարանի հիմնական ֆոնդում ընդգրկված առարկան, համաձայն հավելվածի, ժամանակավոր (2024 թվականի հոկտեմբերի 11-ից մինչև 2025 թվականի մարտի 21-ը) ի պահ հանձնել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին՝ պրոֆեսոր Լ.Ղարիբջանյանի անվան պատմության թանգարանում «Ուսանողների դերը ուշխորհրդային Հայաստանի լիբերալ մշակույթում» խորագրով անցկացվող ցուցահանդեսին ցուցադրելու նպատակով:

2. «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ի պահ հանձնվող առարկայի տեղափոխումը, պատշաճ պահպանումը և հետ վերադարձը:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի և «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրենի վրա:

4. Սույն որոշման կատարման հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
11.10. 2024թ.
հ. 3930–Ա որոշման

ՑԱՆԿ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՎՈՂ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՅԻ

№	Անվանումը	Ստեղծման ժամանակը և տեղը	Նյութը, տեխնիկան	Քանակը	Հաշվառման համարը
1.	«Կռունկ» էլեկտրական կիթառ	1971 թ., Երևան	փայտ	1	ՄՄ 2352

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**